Հավելված
«Հայաստանի Հանրապետության փաստաբանական
դպրոց» հիմնադրամի կառավարման խորհրդի
թիվ 13 արձանագրության
(Փոփ. 08.08.2013թ. N 14)

ԿԱՐԳ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի **(այսուհետև՝ ՀՀ փաստաբանական դպրոց)** համակարգիչներից օգտվելու և էլեկտրոնային հաղորդակցության սույն կարգը **(այսուհետև՝ Կարգ)** սահմանում է ՀՀ փաստաբանական դպրոցի սեփականությունը հանդիսացող համակարգիչներից օգտվելու իրավունքները, սահմանափակումները, պարտականությունները, արգելքները, գաղտնիությանը և պատասխանատվությանը վերաբերող ընթացակարգերը։
   (Փոփ. 08.08.2013թ. N 14)
2. Ուղարկած և ստացած հաղորդագրությունները, ներառյալ անհատական հաղորդագրությունները և այլ տվյալները, որոնք պահպանված են համակարգչի էլեկտրոնային փոստում, ձայնային փոստում կամ համակարգչում՝ անկախ իրենց բովանդակությունից, համարվում են ՀՀ փաստաբանական դպրոցի սեփականությունը:
   (Փոփ. 08.08.2013թ. N 14)
3. Կարգը պարտադիր է բոլոր օգտատերերի համար։
4. Համակարգչի, էլեկտրոնային փոստի և այլ էլեկտրոնային միջոցների տրամադրման նպատակներն են՝ ՀՀ փաստաբանական դպրոցում աշխատանքի դյուրինացումը և ուսուցման (վերապատրաստման) արդի մեթոդներով իրականացումը:
   (Փոփ. 08.08.2013թ. N 14)
5. Կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը։
   (Փոփ. 08.08.2013թ. N 14)
6. Կարգում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ իմաստը

(նշանակությունը).

1) **օգտատերեր՝** ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն, աշխատակազմի անդամներ, ունկնդիրներ, վերապատրաստում անցնող փաստաբաններ, դասախոսներ, ՀՀ փաստաբանական դպրոցի համակարգիչներից օգտվող այլ անձինք,
2) **ադմինիստրատոր (վարչավար)՝** տեղեկատվական տեխնոլոգիայի անվտանգության աշխատակից,
3) **էլեկտրոնային փոստ՝** ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից տրամադրված փոստ։

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

II. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

7. Օգտատերերին հասանելի են ՀՀ փաստաբանական դպրոցի տարբեր տեխնոլոգիաները, որոնք բխում են վերջիններիս աշխատանքային և (կամ) այլ գործառույթների, պարտականությունների կատարման անհրաժեշտությունից։

   (Փոփ. 08.08.2013թ. N 14)

8. Օգտատերերի կողմից ուղարկված փոստային նամակները, ձայնային փոստը, հեռախոսազանգերը, համացանցը, տեղեկատվական հայտարարությունների տախտակը չեն ստուգվում՝ բացառությամբ Կարգի 9-րդ կետով նախատեսված դեպքի։
9. Կարգի 8-րդ կետով սահմանված տեղեկատվությունն ադիմինիստրատորը (վարչավարը) պարտավոր է տրամադրել միայն ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին՝ վերջինիս գրավոր պահանջի դեպքում, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ։

   (Փոփ. 08.08.2013թ. N 14)

10. ՀՀ փաստաբանական դպրոցը չի խրախուսում այն, որ օգտատերերը պահպանեն անհատական տեղեկատվություն ՀՀ փաստաբանական դպրոցին պատկանող որևիցե տեղեկատվական տեխնոլոգիաներում։

    (Փոփ. 08.08.2013թ. N 14)

11. ՀՀ փաստաբանական դպրոցն օգտատերերին հասանելի է դարձնում առցանց ծառայությունները (օրինակ՝ համացանց)։

    (Փոփ. 08.08.2013թ. N 14)

12. ՀՀ փաստաբանական դպրոցը, ելնելով անվտանգության և այլ նկատառումներից, գրանցում և պահպանում է բոլոր էլեկտրոնային գործողությունները, այդ թվում՝
1) բոլոր հեռախոսազանգերի ելքային և մուտքային ժամանակահատվածի տևողությունը,
2) ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստը (արխիվացման ժամկետը՝ երեք ամիս),
3) բոլոր ֆաքսիմիլային փոխանցումների ուղարկած և ստացած օրինակները,
4) յուրաքանչյուր էլեկտրոնային փաստաթուղթ (էլեկտրոնային փաստաթուղթը պատմություն ունի, որը ցույց է տալիս, թե ինչ նպատակներով են օգտատերերն օգտագործել տվյալ փաստաթուղթը),
5) այցելած ինտերնետային (համացանցային) կայք էջերը։

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

13. ՀՀ փաստաբանական դպրոցը չի երաշխավորում էլեկտրոնային փոստի հաղորդագրությունների անվտանգությունը։

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

III. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԳԵԼՔՆԵՐ

14. Օգտատերերը համցանցի ծառայություններից պետք է օգտվեն միայն գործնական նպատակով։
15. Օգտատերերը պարտավոր են տեղեկատվական տեխնոլոգիաները պահել մաքուր վիճակում, միջոցներ ձեռնարկել դրանց վրա հեղուկ, պինդ ֆիզիկական վիճակի նյութեր լցնելուց կամ որևէ կերպ փչացնելուց, կեղտոտելուց, օգտագործման համար ոչ պիտանի դարձնելուց։
16. Էլեկտրոնային փոստը պետք է օգտագործվի միայն օգտատիրոջ կողմից։
17. Ցանկացած վիրուսի ի հայտ գալու կամ տեղեկատվական տեխնոլոգիայի ցանկացած խափանման դեպքում օգտատերը պարտավոր է անմիջապես իրազեկի ադմինիստրատորին։
18. Խիստ գաղտնի տեղեկատվությունը չպետք է ուղարկել էլեկտրոնային փոստի միջոցով։
19. Օգտատերերը չպետք է ներբեռնեն այնպիսի կայք էջեր, ինչպես նաև պատճենահանեն, փոխանցեն, ստանան կամ պահպանեն այնպիսի հաղորդագրություններ, որոնք պարունակում են տեղեկատվություն, ինչպիսին են՝

1) ահաբեկչության քարոզում (որոնք ցուցադրում են ահաբեկչական նյութերի, սարքավորումների պատրաստում),
2) թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի պատրաստում կամ օգտագործում,
3) խտրականություն կամ ագրեսիա,
4) անհատի կամ խմբի նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունք,
5) անօրինական, պոռնոգրաֆիական, զրպարտչական, վիրավորական, նվաստացուցիչ կամ այլ նմանատիպ տեղեկատվություն,
6) ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրական նպատակներին հակասող տեղեկատվություն:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

20. Չլիազորված ծրագրերի օգտագործումն արգելվում է:
21. Բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի՝ օգտատերերին արգելված է զբաղվելու կամ փորձել զբաղվելու՝

1) այլ օգտատերերի կամ երրորդ անձանց էլեկտրոնային հաղորդակցության վերահսկմամբ,
2) համակարգի կամ հաղորդակցման դաշտ մուտք գործելով,
3) այլ օգտատերերի ծածկագրերի օգտագործմամբ համակարգ մուտք գործելու,
4) համակարգչի կամ ցանցի անվտանգության միջոցների փորձարկմամբ և (կամ) վերահսկմամբ:

22. Անազնիվ, անհամապատասխան կամ վիրավորական, ռասայական, սեռական, կրոնական անարգանք կամ կատակ պարունակող հաղորդագրությունները, բացահայտ սեռական հաղորդագրությունները կամ նկարները, մուլտֆիլմերը կամ կատակներն արգելված են:
23. Արգելվում է անանուն կամ կեղծ անվամբ էլեկտրոնային հաղորդագրությունների օգտագործումը:
24. Արգելվում է այնպիսի գործողությունների կատարումը կամ անգործության դրսևորումը, որը կհանգեցնի ցանցի գործառութային խանգարման:

IV. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

25. Օգտատերերը պետք է հարգեն այլ անձանց էլեկտրոնային հաղորդակցությունների գաղտնիությունը:
26. Ծածկագրերը սեփականության ոչ մի իրավունք չեն տալիս օգտատերերին: Օգտատերերը պարտավոր են պահպանել ծածկագրերի գաղտնիությունը:

27. Օգտատերերը պարտավոր են ծածկագրերի վերաբերյալ տեղեկատվություն տալ ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին, իսկ փոփոխությոն դեպքում՝ անհապաղ տեղյակ պահել նաև փոփոխության մասին:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

V. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

28. ՀՀ փաստաբանական դպրոցը պատասխանատվություն չի կրում՝

1) կորած, վնասված, փչացած, փոփոխության ենթարկված, հայտնաբերված կամ չարաշահված որևէ անհատական տեղեկատվության համար, որը փոխանցվել կամ պահպանվել է ՀՀ փաստաբանական դպրոցին պատկանող տեխնոլոգիաների միջոցով,
2) կորած կամ հասցեատիրոջը չհասած էլեկտրոնային փոստի, ձայնային փոստի կամ որևէ անհատական տեղեկատվության պահպանման համար:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

29. Ցանկացած հաղորդագրության կամ տեղեկատվության համար, որը ստեղծվում և (կամ) պահպանվում է ՀՀ փաստաբանական դպրոցի տեղեկատվական տեխնոլոգիաներում, ներառյալ անձնական կարիքներին վերաբերող, ՀՀ փաստաբանական դպրոցը պատասխանատվություն չի կրում:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

30. Ցանկացած օգտատեր, ով չարաշահում է իր իրավունքները, այն է՝ ապօրինի մուտք է գործում դեպի էլեկտրոնային փոստ կամ համացանց, ենթակա է կարգապահական պատասխանատվության:
31. Եթե օգտատերը դիտավորյալ խախտում է սարքավորումների, ցանցային անվտագության և ծրագրերից օգտվելու կանոնները, ապա ենթակա է կարգապահական պատասխանատվության:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

32. Կարգն ուժի մեջ է մտնում ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի կողմից հաստատվելու օրվան հաջորդող օրվանից և գործում է անժամկետ:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

33. Կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել միայն ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի կողմից:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

34. Կարգի հետ կապված մեկնաբանությունները (պարզաբանումները) տրվում են ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի (բողոքի) հիման վրա:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)